

3-23

ՀՀ գիտութեան համակարգի
արեւելահայաստանի տարածքային
կենտրոնի

ՅԱՐԱՆՅԱՆ ՈՒՐԴԻԿ ՖԵԼԻՔՍԻ

ՔՈՒՐԴ-ՀՐԵԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1948-2006թթ.

Է. 00.02. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ

ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՏՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2009

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Կ. Ա. Չաչանյան
պատմական գիտությունների թեկնածու Ա. Գ. Ստամբոլյան


Առաջատար կազմակերպություն՝ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ

Պաշտպանությունը կայանալու է 2009թ. հունիսի 19-ին, ժ. 13.00-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 375019, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող., 24գ.):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:


Սեղմագիրն առաքված է 2009թ. մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



Ռ. Ղազարյան

Մեծարգու պրն. Նուխչիվանյանին՝
լուրագրայն քարտեմադրումն փնտրելով՝



Թեմայի արդիականությունը

Մերձավոր Արևելքի տարածաշրջանը դարեր շարունակ գտնվում է առաջատար երկրների և ժողովուրդների կրոնա-քաղաքական, սոցիալ-տնտեսական շահերի բախման կիզակետում: Այս երկրամասն, իրավամբ, հանդիսանում է աշխարհի պայթուցիկ գոտիներից մեկը, որտեղ նեղ հանգույցի մեջ են միախառնված ազգերի սոցիալ-տնտեսական, կրոնա-դավանական, տարածքային և աշխարհաքաղաքական այլ խնդիրներ: Այստեղ տեղի ունեցող քաղաքական տեղաշարժերն իրենց որոշակի ազդեցությունն են գործում մի ջազգային քաղաքականության և տնտեսության մեջ:

XXդ. կեսերին Մերձավոր Արևելքում պատմա-քաղաքական ապարտեզ մուտք գործեց սինիստական Խորպեյլ՝ որպես արևմտյան նմուշ լիբերալիզմի և ժողովրդավարական արժեքների կրող: Սինիստական գաղափարախոսությունն առձակապես մերձավորարևելյան արաբական ազգայնականության և իսլամական արմատական գաղափարների հետ: Հիշալ հակառակության հաղթանակումը դարձավ Մերձավոր Արևելքի անլուծելի թվացող ճգնաժամերից մեկը, որի շարժման ակտիվներն տարածաշրջանի մի շարք կարևոր քաղաքական գործընթացներ:

Դեռևս նախքան Խորպեյլ պետության հռչակումը 1948թ. սինիստական գործիչները նախան չէլ են ապագա պետության հիմնական արտաքին քաղաքական կողմնորոշիչները Մերձավոր Արևելքում: Հետագայում, նախան չլած քաղաքական ուղղություններից շատերը լավագույնս արդարապես կտրվեցին Խորպեյլի արտաքին քաղաքականության հայեցակարգում, որում առանձնահատուկ տեղ է հատկացվում «Ծայրամասային ռազմավարության» (Peripheral Strategy)¹ հիմնարկներին: Հիշալ ռազմավարության շրջանակներում կարևորվում է հրեական պետության կողմից ցուցաբերվող ֆինանսատնտեսական և ռազմատեխնիկական աջակցության քաղաքականությունը մերձավորարևելյան կրոնա-էթնիկական փոքրամասնություններին: Ռազմավարության հիմնական տրամաբանությունը բխում է արաբական ազգայնականության և ագրեսիվ համաարաբականության դեմ պայքարի գաղափարից, որը պետք է իրականացվեր տարածաշրջանի ճնշված կրոնական և էթնիկ փոքրամասնությունների հետ համագործակցության միջոցով: Վերջիններիս շարքում ուրույն կարևորություն տրվեց քրդերին, որոնց հետ հրեա ժողովուրդն ունի դարերով կոպիտ պատմա-շակութային ընդհանրություններ:

XXդ. երկրորդ կեսից սկսվեց քուրդ և հրեա ժողովուրդների պատմա-քաղաքական փոխառնչությունների անենամակտիվ փուլը: Այս շրջանում կարևորվեցին երկկողմ ռազմա-քաղաքական գաղտնի մակարդակի

¹ Անգլիալեզու գրականության մեջ հայտնի է “Peripheral Strategy” կամ “Theory of Allaying the Periphery” սահմանումներով: See <http://thesite2000.virtualave.net/iraqijews/escape.html>, also see Mamikonyan S., Israel and the Kurds (1949-1990), Iran and the Caucasus, Vol. 9.2, Brill Academic Publishers, Boston, 2005, pp.391-392

վր խառն շրջանները՝ որպես Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական և ռազմաառարարական նշանակության գործընթաց:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է արդի ժամանակաշրջանում քուրդ-հրեական վրիժարաբերությունների քաղաքականացվածությամբ, ինչը ոչ միայն նոր որակ է հաղորդում քուրդ-հրեական պատմական վրիժարություններին, այլև իր անմիջական հետքն է թողնում տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացներում:

Ներկայացված ուսումնասիրությունն այդ ուղղությամբ կատարված առաջին վործն է:

Թեմայի հիմնական նպատակն ու խնդիրները

- Բացահայտել արդի ժամանակաշրջանում քուրդ և հրեա ժողովուրդների պատմամշակութային և քաղաքական հարաբերությունների նշանակությունը Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական գործընթացներում:

- Ներկայացնել քուրդ և հրեա ժողովուրդների կենդանի մշակութային ընդհանրությունների պատմականությունը:

- Զննել քուրդ-հրեական վրիժարությունների բնույթը սիոնիստական գաղափարախոսության շրջանակներում:

- Բացահայտել նորագույն պատմական շրջանում քրդական հրեաների կենդանի մշակութային միավորի դերը երկու ժողովուրդների պատմաքաղաքական հարաբերություններում:

- Ներկայացնել XXդ. երկրորդ կեսին հրեական պետության՝ քրդերի նկատմամբ ծավալված դիվանագիտության հիմնական ուղղությունները:

- Զննել 1948-2006թթ. քուրդ-հրեական գաղտնի ռազմաքաղաքական համագործակցության և դրան խոչընդոտող հանգամանքների խնդիրը:

- Բացահայտել քրդական հիմնահարցի նշանակությունը տարածաշրջանային գործընթացներում և սիոնիստական Իսրայելի դերն այդ հարցում:

- Բացահայտել քուրդ-հրեական վրիժարությունների աշխարհաքաղաքական խնդիրներն արդի ժամանակաշրջանում:

Թեմայի արդյունքների նորությունը

Ներկայացված թեման առաջին անգամ է դառնում քուրդ-հրեական հարաբերությունները ըննող համակողմանի ուսումնասիրության առարկա Մինչ այդ, քուրդ-հրեական հարաբերությունները բացահայտող հետազոտություններ են կատարվել վրիժարական հոգևածների կամ առավել ծավալային գիտական աշխատությունների (բացառաբաց այլպեզու) տեսքով, որոնք սակայն, վերաբերում են քուրդ-հրեական հարաբերությունները ըննող որևէ առանձին հարցի ուսումնասիրությանը:

Արդյունագիտական նյութի վերլուծությունն ապացուցում է, որ քուրդ-հրեական պատմական վրիժարությունները սկզբնավորվել են շատ ավելի ուշ շրջանում (մ.թ. X-XIդ.), քան հրեական տարրի ներթափանցումը՝ հետագայում քրդերով բնակեցված մերձավորարևելյան շրջաններ (մ.թ.ա VIIIդ.): Այդ վրիժարությունների ձևավորումն ու զարգացումը տեղի է ունեցել Մերձավոր

Արևելքի հենց այն քրդաբնակ շրջաններում, որոնք ներկայումս առավել քան ներգրավված են տարածաշրջանային քաղաքական գործընթացներում: Ռադիկալիզմը համընկնում է ներկայիս Իրաքյան Բրիգադանի տարածքին: Այդ իսկ պատճառով քուրդ-հրեական հարաբերությունների ուսումնասիրության ոլորտում առանձնացվող մոտեցում է ցուցաբերվել իրաքյան քրդերի գործունիք՝ հաշվի առնելով իրաքյան քրդերի և հրեաների միջև պատմամշակութային վրիժարությունների խորությունը և համատեղ պատմական ուղին:

Քուրդ և հրեա ժողովուրդների դարավոր համակեցության պոպուլյար պատմամշակութային ընդհանրությունները խոստովել են քրդական հրեաների կենդանի մշակութային միավորի մեջ Կերֆուհիս գոյությունը լավագույնս արգասիքն է քուրդ-հրեական պատմական վրիժարությունների:

Երկու ժողովուրդների պատմամշակութային հարաբերությունների ձևավորման և ժամանակագրության վերաբերյալ հստակ տեղեկություններ չեն պահպանվել, ուստի հնարավոր չէ ձգարիտ որոշել քրդական հրեաների կենդանի մշակութային միավորի ձևավորման ժամանակագրությունը: Ենթադրվում է, որ դա համընկնում է Xդ. հետո ընկած ժամանակաշրջանին, երբ պատմագրության մեջ հայտնվում են առաջին արժանահավատ տեղեկությունները քրդական կենսի վերաբերյալ:

Ստենախոսը վործել է քուրդ-հրեական հարաբերությունների պատմամշակութային ուղղվածությանը զուգահեռ՝ զարգացնել նաև այդ վրիժարությունների պատմաքաղաքական առնչվածությունը: առանձնացվող մոտեցում է ցուցաբերվել քուրդ-հրեական վրիժարությունների քաղաքական ոլորտին վերաբերող խնդիրներին, որոնց ակունքները գնում են XIII դ. խորքերը և գուցե նաև սելջուկ վաղ ժամանակաշրջան: Ռա այն շրջանն է, երբ «Բրիգադանի» քրդական հրեաների համայնքում սկսեց շրջանառվել «Ավետյաց երկիր» արաբներից ազատագրելու և հրեաների՝ երեց Իսրայելյան (Իսրայելի երկիր) համախմբվելու քաղաքական գաղափարը (հի չեցնենք, որ այդ ժամանակ երեց Իսրայելը գտնվում էր Պաղեստինի կազմում):

Միաժամանակ, ստենախոսը վործել է վերլուծել քրդական հիմնահարցի շուրջ ծավալված տարածաշրջանային գործընթացները՝ դրանք դնելով քուրդ-հրեական արդի ժամանակաշրջանի վրիժարությունների հիմքում:

Անընդունելի է համարվում քուրդ-հրեական հարաբերությունների միավորմանի ուսումնասիրությունը՝ անտեսելով այդ վրիժարությունների զարգացմանը խոչընդոտող մի շարք հանգամանքներ: Խոսքը վերաբերում է Մերձավոր Արևելքի քրդաբնակ շրջաններում գործող քրդական տարբեր կրոնաքաղաքական խմբավորումներին, որոնք ունեն ակնհայտ հակախոնիստական դիրքորոշում:

Ստենախոսության առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ վործ է արվել կառել միմյանց քուրդ-հրեական վրիժարությունների բոլոր առնչվածությունները՝ (պատմամշակութային, կենսի, քաղաքական և տնտեսական) դրանք դիտարկելով համընդհանրության մեջ ինչը հնարավորություն է տալիս համալսել փակ ընկալության ենթարկել երկկողմ հարաբերությունները:

Ստենախոսն արդի ժամանակաշրջանի քուրդ-հրեական գաղտնի ռազմաքաղաքական հարաբերությունների ըննարկումը կատարել է տարածաշրջանային զարգացումների համատեքստում: Այն դիտարկվել է

ամերիկյան ռազմաքաղաքական ճամբարի՝ հակաաիւրեպայան դեմ ծավալած քարոզարշավի շրջանակներում, որում անժխտելի է քրդական հիմնահարցի և Խորպեյի դերի կարևորությունը:

Թեմայի կիրառական նշանակությունը

Թեմայի գործնական նշանակությունը կարևորվում է հասկանալու համար քրդո-իրեական փոխառն շրջանակների գարգացման հիմքերը Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական գործընթացներում:

Ատենախոսության նյութը և տվյալները կարող են օգտագործվել Մեծ Մերձավոր Արևելքի խնդիրներով զբաղվող մասնագետների կողմից և տարածաշրջանային երկրների ու ժողովուրդների պատմությանը նվիրված հատուկ դասընթացներում: Թեմայի հիմնական դասընթացներ կազմակերպելու կամ օգտագործվել մասնագիտական դասընթացներ կազմակերպելու կամ ռեգիոնալագիտություն առարկայի դասավանդման ժամանակ: Դրանք կարող են օգտակար լինել նաև քրդական շարժման որոշ օրինաչափությունների ուսումնասիրման համար:

Ատենախոսության եզրահանգումները կարող են օգտակար լինել սեփական մարմինների համար՝ վերլուծական նյութ պատրաստելիս:

Թեմայի մեթոդաբանական հիմքը

Թեմայի հիմնական ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XXդ. երկրորդ կեսի քրդո-իրեական քաղաքական և դիվանագիտական գաղտնի փոխառն շրջանների շրջանը: Արդի ժամանակաշրջանում առաջիկ համապարփակ պատկերացում կազմելու համար քրդո-իրեական հարաբերությունների ուղղվածության վերաբերյալ առենախոսը փորձել է նաև պատմական անդրադարձ կատարել քրդո-իրեական փոխհարաբերությունների սկզբնավորման հնագույն շրջանին:

Թեմայի ժամանակագրական սահմանները

Թեմայի հիմնական ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XXդ. երկրորդ կեսի քրդո-իրեական քաղաքական և դիվանագիտական գաղտնի փոխառն շրջանների շրջանը: Արդի ժամանակաշրջանում առաջիկ համապարփակ պատկերացում կազմելու համար քրդո-իրեական հարաբերությունների ուղղվածության վերաբերյալ փորձել ենք նաև պատմական անդրադարձ կատարել քրդո-իրեական փոխհարաբերությունների սկզբնավորման հնագույն շրջանին:

Թեմայի փորձաքննությունը

Հայաստանի հանրապետության գիտական հանդեսներում լույս են տեսել առենախոսության բովանդակությունն արտացոլող երեք

հոդվածներ: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության համար երաշխավորվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնում:

Օգտագործված գրականության համառոտ տեսություն

Ատենախոսությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն և պարսկերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա Պատմահամեմատական և աղբյուրագիտական վերլուծությունների ժամանակ օգտագործվել են մի շարք սկզբնաղբյուրներ:

Քրդական հրեաների պատմա-շակութային կյանքի ուսումնասիրության ոլորտում անգնահատելի ներդրում է կատարել ազգագրագետ Է. Բրատերը, որի «Քրդստանի հրեաները»² աշխատությունը լավագույնս բացահայտում է քրդական հրեաների պատմական դերակատարությունն ու անցած ուղին ներկայիս Իրաքյան Քրդստանի տարածքում: Բրատերի աշխատությունն իրենից ներկայացնում է յուրօրինակ հանրագիտարան՝ «Քրդստանի» հրեական համայնքի մասին պատմող կարևոր տեղեկատվությամբ:

Սակայն հարկ է նշել, որ հեղինակն իր աշխատությունը կառուցել է՝ բացառապես հիմք ընդունելով քրդո և հրեա ժողովուրդների կենսա-շակութային պատմական առնչությունները՝ աշխատության մեջ չընդգրկելով այդ հարաբերությունների պատմա-քաղաքական ասպեկտները: Այդ իսկ պատճառով առենախոսը փորձել է քրդո-իրեական հարաբերությունների ուսումնասիրության մեջ ջանքեր անել նաև հիշյալ խնդիրները:

Բաբելոնյան և հարակից շրջաններում հրեաների բնակության հնագույն շրջանի մասին կարևոր տեղեկություններ է պարունակում «Հրեական հանրագիտարանը»³:

Մ.թ.ա. 10. միջագետքյան շրջաններում հրեական կրոնի տարածման վերաբերյալ կարևոր տվյալներ է հաղորդում ամերիկացի հետազոտող Լ. Գինզբերգը⁴, որի գաղափարական միտքը շարունակում է Ս. Գրեյցելը⁵: Վերջինիս աշխատությունը տեղեկություններ է պարունակում մ.թ. սկզբնական դարերում Ադիաբենեի թագավորությունում հրեական կրոնի տարածման և ազդեցիկության վերաբերյալ:

XXդ. 40-ական թթ. քրդո-իրեական հարաբերությունները մուտք գործեցին ռազմաստրատեգիական գաղտնի համագործակցության ոլորտ, որն ուսումնասիրության նյութ է դարձել թուրք հեղինակ Հ. Յահյայի համար: Նրա՝ «Խորպեյի քրդական խաղաղությունը»⁶ աշխատությունն զգալիորեն բացահայտում

² Brauer E., The Jews of Kurdistan, Completed and Edited by Patai R., Detroit, Wayne State University Press, 1993

³ The Standard Jewish Encyclopedia: Tribes, Lost Ten and Babylon. A History of the Jewish People, Edited by Ben-Sasson H. H.

⁴ Ginzberg L., The Legends of the Jews, Vol. I, The Jewish Publication Society of America, Philadelphia, 1968

⁵ Grayzel S., A History of the Jews, Published by New American Library, New York, 1968

⁶ Yahya H. (Adnan Oktar), 'Israil'in Kürt Karti. 'Israil'in Ortadoğu Stratejisi ve Kürt Devleti Senaryoları, Ankara, 1993

ներկայիս Իրաքյան Քրդստանում հրեականության լայն տարածումն ու ազդեցությունը: Սակայն սուղ աղբյուրագիտական նյութի առկայության պայմաններում հնարավոր չէ հաստատել կամ ժխտել վերոհիշյալ հեղինակների հաղորդած տեղեկությունների ճշրտությունը քրդական կնոսի վերաբերյալ:

XII-XIII դդ. (սելջուկյան արշավանքների ժամանակաշրջան) անչափ կարևոր են քրդական հրեաների համայնքի պատմության համար: Սա այն ժամանակաշրջանն է, երբ հայտնվում են առաջին հավաստի տեղեկությունները քրդերի, նրանց կողմից իսլամական կրոնի ընդունման և Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում բնակության վերաբերյալ¹⁷:

XIII դ. սկսած՝ արդեն կարելի է խոսել ներկայիս Իրաքյան Քրդստանի կնոսի արեալի ձևավորման մասին: Ըստ այդմ՝ հավված ենք նաև ենթադրելու, որ հենց այս ժամանակաշրջանին է վերաբերում քրդական հրեաների կնոսի սի պատմական ապարեզում հայտնվելը, և այս շրջանին է վերաբերում քուրդ և հրեա ժողովուրդների պատմամշակութային փոխհարաբերությունների նախապատմությունը:

Քուրդ-հրեական հարաբերությունների պատմամշակութային ուղղվածությունը ժամանակի ընթացքում հող նախապատրաստեց այդ հարաբերությունների՝ դեպի պատմա-քաղաքական հարթություն տեղափոխման համար: Դրա գործնական քայլերը երևացին այն ժամանակ, երբ քրդական հրեաներն սկսեցին հայրենադարձվել դեպի «Ավետյաց երկիր»: Այդ ամենը կատարվեց աշխարհափյուռ հրեաների՝ սեփական պետությունն ստեղծելու քաղաքական գաղափարների ազդեցության ներքո:

Հայտնի է, որ քրդական հրեաների՝ կրեց Իսրայել տեղափոխման առաջին տեղեկությունները վերաբերում են XVI դ. կամ ավելի վաղ շրջանին, երբ այն դեռևս գտնվում էր Պաղեստինի կազմում¹⁸: Սակայն այդ վերաբնակեցումներն, ընդհուպ մինչև XX դ. սկզբնական շրջանը, չեն կրել զանգվածային և պարբերական բնույթ, այլ կատարվել են տարերային ձևով, ուստի և շրջադարձային նշանակություն չեն ունեցել քրդական հրեաների համայնքի հետագա պատմության համար:

Ընդհանրապես, քրդերի և հրեաների համակեցության ողջ ընթացքում տիրել է փոխադարձ կրոնական հանդուրժողականության, փոխշահավետ տնտեսական համագործակցության, փոխազնության և բարեկամական մթնոլորտ, ինչ չի բացառում քրդերի «քաղաքական գիտակցության» վրա՝ հրեական գանգվածների ազդելու հնարավորությունը, առավել ևս, որ հրեաների սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացվածության մակարդակը մշտապես գերազանցել է քրդերի առաջադիմության մակարդակին:

XIX դարավերջից նշանավորվեց աշխարհաքաղաքական ապարեզում սիոնիստական գաղափարախոսության ձևավորման պատմական իրադարձությամբ, որում առանձնահատուկ կերպով ընդգծվեց աշխարհափյուռ հրեա ժողովրդի՝ քաղաքական համախմբման անհրաժեշտության գաղափարը:

¹⁷ См. Асагрян Г. С., *указ. ист.*

¹⁸ <http://www.eleven.co.il/print.php?id=12263>

Այդ հարցի լուծումը սիոնիստները տեսան հրեաների՝ ներկայիս Իսրայելի տարածքում համախմբման մեջ¹⁹:

Վերոհիշյալ գործընթացի մեջ ընդգրկվեցին նաև «Քրդստանի» քրդական հրեաները, որոնց տեղափոխության ծրագիրը ներկայիս Իսրայել մշակվեց սիոնիստական գործիչների կողմից:

Վերաբնակության ընթացքում իրաքյան հրեաներին անգնահատելի օգնություն ցուցաբերեցին քուրդ դրվիցները, որոնք 1930-1940-ական թթ. օգնեցին հրեաներին հատել Իրաքի սահմանը և անվտանգ տեղափոխվել ներկայիս Իսրայել:

Երկրորդ զույլը՝ «Քուրդ-հրեական հարաբերությունները 1940-1980-ական թթ.» բաղկացած է երեք ենթաբաժիններից՝ «Քրդական հրեաների համայնքման պատմա-քաղաքական գործունեությունը», «Քրդական հիմնահարցի տարածաշրջանային նշանակությունը» և «Քուրդ-հրեական քաղաքական համագործակցության ուղեներհները»:

1948թ. մայիսի 15-ին հրապարակվեց «Իսրայելի անկախության հռչակագիրը», որով Իսրայելը ճանաչվեց ոչ միայն հրեական, այլև սիոնիստական՝ ողջ աշխարհի հրեաների պետություն: Նույն օրը Արաբական պետությունների լիգան կոչ արեց իր անդամներին Պաղեստին ուղարկել կանոնավոր զորքեր՝ ազատագրելու արաբական հողերը: Իսրայելի դեմ պատերազմի մեջ մտան Եգիպտոսը, Սիրիան, Իրաքը, Լիբանանը և Հորդանանը: Սա Իսրայելի և արաբական երկրների միջև առաջին պատերազմն էր, որը տևեց մեկ տարի՝ 1948-1949թթ., և ավարտվեց Իսրայելի հաղթանակով²⁰:

Այդ հաղթանակի նշանակությունը բացառիկ էր նրանով, որ կարևոր հոգեբանական խթան հանդիսացավ Իսրայելի համար՝ իր հետագա արտաքին քաղաքականության՝ արդյունավետ իրականացման ճանապարհին, որը, իր հերթին, բարոյափոխության պատմական տեսանկյունից բացառապարտ անդրադարձավ արաբական երկրների վրա: Վերջիններս սիոնիստների հետ համագործակցության մեղադրանքով հարձակում ձեռնարկեցին իրենց երկրների հրեական համայնքների դեմ, որի հետևանքով բազմաազար հրեաներ հեռացան իրենց ծննդավայրից:

Հայրենադարձության պիքն ընդգրկեց նաև Իրաքի քրդական հրեաների համայնքը, որոնք սկսեցին զանգվածաբար գաղթել Իսրայել: Իսկ այն բանից հետո, երբ Իրաքի կառավարությունը թույլատրեց չեզոք Կիպրոսի տարածքից քրդական հրեաներին ինքնաթիռներով տեղափոխվել Իսրայել, օդային փոխադրումների միջոցով (Իսրայելում հայտնի է «Ալի բաբա գործողություն» անվանումով) 1950թ. մայիսից մինչև 1951թ. դեկտեմբեր Իրաքից տեղափոխվեց շուրջ 113 հազ. քրդական հրեա: Նրանց մի որոշակի հատված էլ Իրաքը լքեց Թուրքիայի սահմանով²¹:

Որոշ սիոնիստական գործիչներ անչափ բարձր գնահատեցին Իրաքի քրդական հրեաներին Իսրայել տեղափոխելու միջոցառումները: Ըստ նրանց՝

¹⁹ См. Иванов К., Шейнис З., Государство Израиль: его положение и политика, Государственное издание политической литературы, Москва, 1959, с. 98

²⁰ См. Киселев В. И., Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Издательство «Наука», главная редакция восточной литературы, Москва, 1988, сс. 60-61

²¹ See Sachar H. M., *op. cit.*, p. 399

«1948-1952թթ. իրաքյան հրեաների վերաբնակեցումն Իսրայելում պետք է համարել ոչ միայն փառավոր էջ սիոնիզմի պատմության մեջ այլև սիոնիստական գաղափարախոսության կենսունակության դրսևորում»²²:

Տարիներ անց Իրաքում մնացած քրդական հրեաների մեծ մասն ստիպված եղավ հեռանալ Երկրից, ինչը պայմանավորված էր Իրաքում հակասիոնիստական պիքի օրեցօր ուժգնացմամբ: Այդ քրդական հրեաները լքեցին իրենց հարազատ բնակավայրերը հիմնականում 1967թ. արաբա-իսրայելական պատերազմից հետո, երբ արաբների կրած հերթական պարտությունից զարացած իրաքյան իշխանությունները ճնշումների և հետաաքողումների նոր պիք բարձրացրեցին տեղի հրեաների նկատմամբ: Վերջիններս որակվեցին որպես սիոնիստական լուտեսներ, ենթարկվեցին նորանոր խոշտանգումների. նրանց գույքը կոնֆիսկացվեց, բանկային հաշիվները սառեցվեցին, շատերը ցմահ ազատազրկման դատապարտվեցին և նույնիսկ հրապարակապես կախաղան բարձրացվեցին²³:

Իսրայել տեղափոխված քրդական հրեաները՝ տարիներ շարունակ չկտրեցին իրենց կապերը մոռուլման քրդերի հետ՝ ակնդետ հետևելով նրանց՝ ինքնավարության համար մղած պայքարին: Հանդիսանալով «Քրդստանի» և քրդերի վերաբերյալ գիտելիքների կարևոր աղբյուր: Նրանք զգալի դերակատարում ունեցան Իսրայելի՝ քրդերի նկատմամբ ծավալած քաղաքականության համառոտ քննարկում՝ որոշակիորեն կողմնորոշելով սիոնիստական գործիչներին արտաքին ռազմավարության հարցում:

Ներկայումս քրդական հրեաների թիվն Իսրայելում կազմում է շուրջ 120 հազ.: Նրանք հիմնականում զբաղվում են շինարարությամբ, առևտրով, բեռնակրությամբ, նրանց մեջ կան նաև շինարարական կազմակերպությունների, հյուրանոցների տերեր: Քրդական հրեաների մի մասն էլ կենտրոնացել է գյուղերում, զբաղվում է գյուղատնտեսությամբ²⁴:

Նորաստեղծ Իսրայելում առանձնահատուկ կարևորություն տրվեց Մերձավոր Արևելքի կռիվ, կրոնական և քաղաքական խնդիրներին առնչվող ուսումնասիրությունների անցկացմանը: Այդ նպատակով պետության արտաքին քաղաքականությունն իրագործվեց Երկու հիմնական ուղղվածությամբ՝ բացահայտ և գաղտնի դիվանագիտության սկզբունքով: Բացահայտ դիվանագիտությունն իրականացվեց պետական քաղաքական գործիչների, իսկ գաղտնի դիվանագիտությունը՝ հրեական հատուկ ծառայությունների միջոցով:

Գաղտնի դիվանագիտությունը սիոնիստական ղեկավարության համար խթան հանդիսացավ՝ ապահովելու բացահայտ դիվանագիտության արդյունավետ գործունեությունը: Անվանի համառոտաբան Իսրայելում կարևորվեց գաղտնի կապերի հաստատումն իրաքյան քրդերի հետ, որոնք պայքարել են իրենց կռիվ իրավունքների համար: Քրդերի հետ գաղտնի հարաբերությունների ընդլայնումը դարձավ Իսրայելի «Ծայրահասակի ռազմավարության» անկյունքարերից մեկը:

²² See *op. cit.* <http://www.thesite2000.virtualave.net/iraqijews/escape.html>, (Shohet M., The Escape from Iraq: a Personal Account)

²³ See *op. cit.* <http://www.thesite2000.virtualave.net/iraqijews/escape.html>

²⁴ See Zaken M., The Kurdish Jews in Israel, The Sentinel, May 16, 1991

Արաբա-իսրայելական հակամարտության պայմաններում Իրաքին չեզոքացնելու և թուլացնելու նպատակով Իսրայելը գաղտնի շփումների մեջ մտավ քրդական շաժման ղեկավարների հետ²⁵:

1960-ական թթ. քուրդ-հրեական փոխհարաբերություններում նոր էջ բացվեց: Այդ շրջանում հյուսիսային Իրաքի քրդերը զինված պայքարի դուրս եկան արաբական ազգայնականության գաղափարներով տոգորված Բաղդադի վարչակարգի դաժան և կեղեքիչ քաղաքականության դեմ: Ասպետարության ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց քրդական հռչակավոր Բարզանի ցեղի ներկայացուցիչ և Քրդստանի դեմոկրատական կոալիցիոնական առաջնորդ Մուսատաֆա Բարզանին: Արվեց քրդական հիմնադրամ:

Քրդական ընդվզումը որոշ տատանումներով շարունակվեց մինչև 1975թ.՝ գրավելով արտաքին ուժերի ուշադրությունը: Թեպետ հետագայում բազմիցս նշվելու էր ԱՄՆ-ի և Իրանի՝ իրաքյան քրդերին ցուցաբերած աջակցության մասին ասպետարության ընթացքում, բայց Իսրայելն առաջիններից էր, որ օգնության ձեռք մեկնեց քրդերին՝ բանեցնելով իր գործակալական համակարգի հմտությունները²⁶:

Քրդերի հետ համագործակցության ընթացքում Իսրայելը կարողացավ շատ կարևոր տեղեկություններ հավաքել իրաքյան բանակի վերաբերյալ, որում իրենց որոշակի դերակատարում ունեցան քրդական հրեաները: Ղեռ չսկսված 1967թ. «Վեցօրյա պատերազմն» ընդդեմ արաբական երկրների՝ իսրայելցիները քրդերի հետ իրենց կապերի շնորհիվ կարողացան ձեռք բերել իրաքյան բանակի ՄԻԳ 21 ինքնաթիռներից մեկը, որի փախուստն Իրաքի ռազմաօդային ուժերից իրականացրեց ազգությամբ քրդական հրեա օդաչուն: Իսկ իրաքյան բանակում ծառայող այդ օդաչուի և իսրայելցիների միջև կապ հաստատած միջնորդները քրդեր են եղել: ՄԻԳ 21-ի տեխնիկական առանձնահատկությունների վերաբերյալ ձեռք բերած տեղեկությունները վճռորոշ դերակատարում ունեցան «Վեցօրյա պատերազմի» առաջին իսկ օրը՝ Եգիպտոսի օդուժի դեմ ձեռնարկած իսրայելական զորհների ժամանակ²⁷:

«Վեցօրյա պատերազմի» ընթացքում Բաղդադը չկարողացավ օգնել Իսրայելի դեմ պատերազմող արաբական երկրներին, քանի որ հայտնվել էր ներքաղաքական անկայուն իրավիճակում: Քրդերի դեմ կռիվների հետևանքով իրաքյան կառավարությունը հնարավորություն չունեցավ մասնակցել պատերազմին և ինքնըստինքյան հայտնվեց չեզոք վիճակում: Պատերազմն ավարտվեց Իսրայելի հաղթանակով, որն ընդամենը մեկ շաբաթվա ընթացքում պարտության մատնեց Եգիպտոսին, Հորդանանին և Սիրիային²⁸:

Իսրայելում բնականաբար բավարարված էին քրդական գործոնի՝ արդյունավետ օգտագործման փաստի կապակցությամբ, ինչն էլ ավելի ամրապնդեց քուրդ-հրեական փոխադարձ վստահությունը: Այուս կողմից, դա

²⁵ Եգիպտոսի ղապտիական համայնքի հետ նմանօրինակ հարաբերություններ հաստատելու իսրայելական փորձերը հաջողությամբ չպսակվեցին, ինչը հիմնականում պայմանավորված էր եգիպտական պետականության պատմական շարունակականության փաստով: See <http://www.weeklyahram.org>, (Saleh A. J., Israel: the Ultimate Winner)

²⁶ Տե՛ս նույն տեղում

²⁷ See Yahya H. *op. cit.*

²⁸ См. Киселев В. И., ук. ист. сс. 104-106

հանգեցրեց քուրդ-իրեական հարաբերությունների — աստիճանական «քողազերծմանը»: Ինչպես նշում է թուրք հեղինակ Հ. Յահյան, հիշյալ փոխարաբերությունները դարձան «Մերձավոր Արևելքի ամենավատ թաքցրած գաղտնիքը»²⁹:

Իրաքի բաախստական վարչախումբը, ճիշտ գնահատելով իրավիճակի բարդությունը, հարկադրված եղավ գիտնների գնալ քրդական ապստամբության ջատագովներից մեկի՝ միապետական Իրանի նկատմամբ, որի հետ ուներ սահմանային խնդիրներ: 1975թ. մարտի 6-ին երկու երկրների միջև ստորագրվեց Աժժիրյան համաձայնագիրը, որով Իրաքը երկու երկրների սահմանը հարավում ճանաչեց Շաբ-է-Արաբ գետի բնահունը (դա ձեռնտու էր Իրանին), իսկ Իրանը պարտավորվեց դադարեցնել աջակցությունը քուրդ ապստամբներին³⁰:

Այդ իրադարձությունների ներքո Իսրայելում ևս ստիպված եղան առժամանակ հրաժարվել քրդերի հետ համագործակցության գաղափարից, քանի որ պարտավորվեցին հարգել այն պայմանավորվածությունը, որ ձեռք էր բերվել դաջնակից Իրանի և Իրաքի միջև: Այսպիսով, 1975թ. ավարտվեց քուրդ-իրեական ռազմա-քաղաքական համագործակցության ամենասկիզբի շրջանը:

Իսրայելը և շահական Իրանը խորապես գիտակցել են քրդերին օգնություն ցուցաբերելու գործում ԱՄՆ-ի մասնակցության կարևորությունը: Սակայն ամերիկյան վարչակարգը երկար ժամանակ խտաժվել է վճռական քայլերից: Այդ հարցում որոշակի շրջադարձ արձանագրվեց 1972թ., երբ Իրաքի և Խորհրդային միության միջև ստորագրվեց բարեկամության և համագործակցության պայմանագիր³¹: Իրաք-ԽՍՀՄ համագործակցության խորացման սպառնալիքը դրդեց Միացյալ Նահանգներին առավել գործնական դիտարկել իրաքյան խնդիրները: ԱՄՆ-ում եկան այն համոզման, որ քրդական գործունի շահարկումն Իրաքի նկատմամբ ճնշում գործադրելու լուրջ լծակ կարող է դառնալ: Մինչ այդ, ԱՄՆ Պետքարտուղարության և Ազգային անվտանգության խորհրդի իսրայելամետ և հակաքրդական ուժերի միջև ընթացել է մրցակցություն հյուսիսային Իրաքի քրդերին աջակցելու հարցի շուրջ Եվ 1972թ. Ազգային անվտանգության խորհրդի իսրայելամետ գործիչները, Քիսինգերի գլխավորությամբ, համոզեցին նախագահ Նիքսոնին, որ որևիճառաբան է անհասպաղ օգնել քրդերին: Եվ պատահական չէ, որ 1972-1975թթ. ընթացքում ամերիկյան վարչակարգը ԿՀԿ-ի ֆոնդից 16 մլն ԱՄՆ դոլար հատկացրեց քուրդ ապստամբներին:

1978-1979թթ. Իրանի Իսլամական հեղափոխությամբ լուրջ հարված հասցվեց Իսրայելի՝ քրդերի նկատմամբ իրականացրած «Ծայրամասային ռազմավարությանը»: Իսրայելը զրկվեց իրաքյան քրդերին օգնելու իրանական կամուրջից և տարածաշրջանային կարևոր դաջնակիցից: Ինչպես հետագայում նշեց Իսրայելի ռազմական հետախուզական ծառայության (Աման) ղեկավար Ա.

²⁹ See Yahya H. *op. cit.*

³⁰ См. Жигалина О. И., Национально-демократическое движение в Иранском Курдистане в 1960-1970-х годах, *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, XIII, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1985, էջ 36

³¹ See Bill J. A., *The Eagle and the Lion: The Tragedy of American-Iranian Relations*, Yale University Press, New Haven Ct., 1989, p. 205

Յարիվը, «մեր կորուստներն Իրանում այնքան մեծ էին, որ նույնիսկ հույս չունեինք մոտ ապագայում ամբողջովին հաղթահարել դրանք, չնայած, որ անում էինք հնարավորինս՝ դրանք նվազագույնի հասցնելու համար»³²:

1980թ. սանձազերծվեց իրանա-իրաքյան պատերազմը, որը առիթ հանդիսացավ ԱՄՆ-ի և Իսրայելի համար իրենց ուժերը կենտրոնացնելու ԻԻՀ-ի ուղղությամբ՝ օգտվելով պատերազմական իրավիճակից: Նրանք Մոսադի և ԿՀԿ-ի միջոցով ակտիվացրին իրենց գործունեությունն Արևմտյան Իրանում, մասնավորապես՝ Իրանական Քրդստանում: Փորձ կատարվեց իրանական քրդերի մեջ ևս արթնացնել ազգային ինքնագիտակցությունը և դուրս բերել նրանց Թեհրանի կենտրոնական իշխանությունների դեմ: Այդ նպատակի իրագործմանն ուղղված ամերիկա-իրաքյան ղեկավարության գաղտնի գործունեության մասին են վկայում քրդական խնդրին առնչվող նյութերը, որ հայտնաբերվել են Թեհրանի նախկին ամերիկյան դեսպանատանը³³:

Սակայն ամերիկա-իրաքյան ջանքերը, որ նպատակ են հետապնդել ապակայունացնել Իրանի ներքաղաքական դրությունը, էական ազդեցություն չգործեցին երկրի ներքաղաքական գործընթացներում. դրա հիմնական պատճառն այն է, որ քրդերը, հանդիսանալով իրանական ժողովուրդ, դարեր շարունակ հանդիսացել են իրանական մշակութային քաղաքակրթության անբաժան միավորը՝ պահպանելով իրենց բնորոշ ավանդույթներն ու պատմությունը: Դրան գումարվում է նաև իրանական քրդերի կենդանի ինքնագիտակցության ցածր մակարդակը և սոցիալ-տնտեսական հետամնաց վիճակը: Սրանք գործոններ են, որոնք խոչընդոտել են ամերիկա-իրաքյան ղեկավարության «քաղաքացիական» իրանական Քրդստանում:

1980-ական թթ. Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (ԲԱԿ), Ա. Օջալանի գլխավորությամբ, քրդական շարժման պիք բարձրացրեց Թուրքիայում: Արդյունքում, թուրքական իշխանությունները եկան այն համոզման, որ քրդական սետտիության ստեղծումն Իրաքում Թուրքիայի ազգային անվտանգությանն ուղղված գլխավոր սպառնալիքն է³⁴, քանզի քրդական շարժման դրական արդյունքներն Իրաքում կարող էին ոգևորել Թուրքիայի քրդերին վճռական պայքարի դուրս գալ թուրքական կառավարության դեմ՝ հանուն ինքնիշխանության իրավունքի ձեռքբերման: Միաժամանակ, հասկանալի դարձավ, որ Իսրայելը մտադիր չէ հրաժարվել իրաքյան քրդերի նկատմամբ իր որդեգրած քաղաքականությունից, ինչը որոշակի լարվածություն առաջացրեց թուրք-իրաքյան հարաբերություններում:

³² См. Иранская революция 1978-1979: причины и уроки, (под ред. А. З. Арабаджяна), Москва, 1989, с. 418

³³ См. Жигалина О., Документы американского посольства в Тегеране по курдскому вопросу, специальный бюллетень Института Востоковедения Академии Наук СССР, № 6 (270), Москва, 1990, с. 120-125

³⁴ مجید یونسیان، «بیوتدیان ترکیه و ابعاد روابط ترکیه و اسرائیل»، کتاب خاور میانه، ویژه حضور اسرائیل در مناطق همجوار ایران، انتشارات مؤسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ابرار معاصر تهران، ۱۳۸۳، ص ۱۱۳-۸۹

Այսպես, որ թուրքմեններն հրաքրոն իրենց թվաքանակը 500հազ. են ներկայացնում, որն իհարկե, անհամեմատ մոտ է իրականությանը³⁸: Մյուս կողմից, արտառոց է թվում թուրքական իշխանությունների և թուրքմենների միջև այդ անհամապատասխանությունը, որը դժվար է բացատրել, թե ինչով է պայմանավորված:

Հատկանշական է, որ «Թուրքմենական ճակատի» ծնունդը հանրակալ Թուրքիայի հետախուզական կառույցների կողմից թուրքմեններին ցուցաբերվող բացահայտ հովանավորչության հետ: 1990-1991թթ.՝ Պարսից ծոցի պատերազմի տարիներին, «Ճակատն» իրեն դառնեց Ս. Հուսեյնին հակառակորդ խմբավորումների շարքին: Այն սահմանափակ քանակությամբ զինյալներ ունի իր տրամադրության ներքո, որոնք երբեմն հակառակ տրամաբանության՝ հարձակումներ են իրականացնում Իրբիլի որոշ հենակետերի ուղղությամբ՝ առաջացնելով քրդերի և ԲԴԿ առաջնորդ Մ. Բարզանիի զայրույթը:

Թուրքիայի՝ իրաքյան թուրքմենների նկատմամբ բռնած դիրքորոշումը բացատրվում է նաև Քիրքուքի նախաբեր շրջանի նկատմամբ թուրքական հավակնություններով, որտեղ բնակվում է թուրքմենների զգալի մասը:

Վերջին տարիներին թուրքական լրատվամիջոցներում տեղեկատվություն հայտնվեց առ այն, որ Իրաքյան Քրդստանում Իսրայելի ծրագրերի մաս է կազմում բանկային համակարգի ստեղծումը, որի նպատակով Իսրայելն իրականացնում է գործնական քայլեր³⁹:

Եթե վերոհիշյալ տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, ապա բանկային համակարգի ստեղծումն Իրաքյան Քրդստանում կարող է Իսրայելի համար դառնալ լավագույն միջոց ֆինանսական դաշտը վերահսկողության տակ վերցնելու առումով: Սակայն թերևս, առայժմ վաղաժամ է այդ մասին խոսելը, քանի որ դեռևս լուծված չէ իրաքյան տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման կարևորագույն խնդիրը, ինչը թույլ կտա Իսրայելին արդյունավետ ներգրավվել Իրաքի ֆինանսատնտեսական համակարգի աշխատանքներում:

Ըստ իրանական տեղեկությունների՝ Իսրայելը, խորացնելով իրաքյան քրդերի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը, փորձում է դրա շրջանակների մեջ ընդգրկել նաև թուրքական քրդերին: Ըստ այդմ՝ «Հարավարևելյան Անատոլիայի բարեկարգման գյուղատնտեսական և արդյունաբերական նախագծի» (անվանակազմով «Գափ») շրջանակներում թուրքական հրեաները երկրի հարավարևելյան շրջաններում տասնյակ հազարավոր մետրերով հողեր են գնում՝ նույնիսկ վճարելով ավելին, քան դրանց իրական գինն է: Նպատակն է համարվում՝ Թուրքիայի քրդաբնակ շրջաններում իսրայելաձեռն մթնոլորտի ձևավորումը, ինչը հնարավորություն կընձեռի Իսրայելին ընդլայնել մերձավորարևելյան ռազմավարության սիոնիստական ծրագրերը: Թուրքիայի հիշյալ հողատարածքները հիմնականում Եփրատի և Տիգրիսի ավազաններն

ընդգրկող քրդաբնակ շրջաններն են: Եվ 2004թ. տվյալներով 60 թուրքական հրեաներ արդեն սեփականացրել փն 413քմ տարածք⁴⁰:

Իսրայելի համար ծեռնտու է տարածաշրջանային գործընթացներում առավելագույն չափով օգտագործել քրդական հրեաների գործունե, որն իրառեսական հաջողություններ է խոստանում իսրայելական կողմին, ի տարբերություն թուրքական հրեաների գործունի խաղաղված: Նույնիսկ կարծիքներ հայտնվեցին այն մասին, որ Իսրայելը նպատակադրել է իրականություն դարձնել չորջ 120հազ. իսրայելաբնակ քրդական հրեաների՝ Իրաք տեղափոխման ծրագիրը, որը թույլ կտա Իսրայելին ծանրաշառ ներկայություն ապահովել Իրաքի հյուսիսում⁴¹:

«Մերձավոր Արևելք» տարածաշրջանային օրաթերթը գրում է. «Ամերիկայի կողմից Իրաքի գաղթախուժմամբ Իսրայել գաղթած իրաքյան ծագման հրեաների մի շարք հայտնի ընտանիքներ, ինչպես օրինակ՝ Բոն Սաունը, Բոն Նուիը, բնակելի տներ և հողեր գնելու նպատակով հայտնվեցին Բաղդադում»⁴²:

Դա կլինի անչափ կարևոր ռազմավարական քայլ Իսրայելի կողմից. Թուրքիայի և ԻԻՀ-ի անմիջական հարևանությամբ գտնվող իրաքյան քրդաբնակ շրջաններն իրենց իսրայելական կողմնորոշման բնակչությամբ կարող է դառնալ անհաղթապարտի արգելապատնեջ՝ ընդդեմ թուրքիրանական ազդեցության տարածման: Իսկ հիմա Իսրայելը չի կարող անվերապահ վստահել քրդերին, որոնց մեջգործում են նաև հակաիսրայելական խմբավորումներ, որոնք գտնվում են տարբեր կրոնա-քաղաքական հոսանքների ազդեցության ներքո:

Թերևս, չափազանցություն է համարել, թե Իսրայելը մտադիր է իրականություն դարձնել չորջ 120հազ. իսրայելաբնակ քրդական հրեաների տեղափոխությունն Իրաք: Նախ, դա չի կարող տեղի ունենալ անվտանգության նկատառումներից ելնելով, իրաքյան ձգնաժամի շարունակականության պայմաններում: Եվ հետո, դա կարող է վերջնականապես փչացնել իսրայելա-թուրքական հարաբերությունները, ինչն այս պահին ծեռնտու չէ Իսրայելին:

Չնայած այն բոլոր տեսակետներին, թե քրդական հրեաների տեղափոխությունն Իրաք ունի բացառապես քաղաքական ենթատեքստ և ուղղորդվում է Իսրայելի կողմից, որոշ քրդական հրեաների ընտանիքների տեղափոխությունն Իրաք կարելի է բացատրել նաև այլ հանգամանքների թելադրմամբ՝ կարոտախտ նախկին բնօրրանի նկատմամբ, կորցրած սեփականության և զույգի վերադարձման ձգտում, անհամակերպվածություն Իսրայելում կենցաղավարման պայմաններին և այլն:

Քուրդ-հրեական անքակտ «դաշինքը» դրդում է Թուրքիային վճարելու այլընտրանքային ուղիներ՝ գոնե նվազագույն մակարդակի իջեցնելու այդ հարաբերություններից հացված «վնասները»: Մասնավորապես, Թուրքիայի կողմից առաջարկվեց նախնական քայլին Քիրքուքի շրջանը դարձնել միջազգային

³⁸ همان علی رضا شیخ عطار، ص ۲۰۸-۲۰۷

³⁹ <http://www.turkishdailynews.com/FrTDN/latest/for.htm#17>

⁴⁰ میند اسماعیل حسینی گئی، آخرین وضعیت قراردادها و توافق های نظامی ترکیه و اسرائیل، کتاب خاور میانه، ویژه حضور اسرائیل در مناطق همجوار ایران ۲، انتشارات مؤسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ایران معاصر، تهران، ۱۳۸۳، ص ۱۴۵-۱۱۳

⁴¹ Տես նույն տեղում

⁴² احمد فراهانی، اسرائیل و محیط امنیتی جدید عراق: اهداف و رویکردها، کتاب خاور میانه، ویژه حضور اسرائیل در مناطق همجوار ایران ۲، انتشارات مؤسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ایران معاصر، تهران، ۱۳۸۳، ص ۲۴۵-۲۰۵

վերահսկման գոտի և տեղահանել պնտեղից քուրդ բնակչությանը՝ որպես ապակայուն սցենար տարր: Սեկ այլ տարբերակով առաջարկվեց քրդական ազգային օջախ ստեղծել Ղազախստանի հարավային նոսրաբնակ շրջաններում՝ ԱՄՆ-ի, Թուրքիայի և այլ երկրների նյութական աջակցությամբ: Եվ վերջապես, Իրաքյան Քրդստանի գոյության անառկելի փաստը դրդեց թուրք գործիչներին հանդես գալ իրենց համար ոչ այնքան բարենպաստ, միաժամանակ անիրատեսական ևս մեկ առաջարկությամբ՝ թուրքական քրդերի համառարած վերաբնակեցում հյուսիսարևելյան Իրաքում՝ տրամադրելով նրանց իրաքյան նավթի հատույթից շուրջ 30% մասնաբաժին (ներկայումս իրաքյան քրդերի չափաբաժինը իրաքյան նավթից կազմում է 13%)⁴³:

Հատկանշական է այն փաստը, որ իրաքյան էներգակիրների ոլորտում իսրայելա-թուրքական տնտեսական համագործակցության եզրերը նույնպես հեռանում են միմյանցից: Պատճառը հարցի քաղաքականացվածությունն է, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է իրաքյան տարածաշրջանի ռազմատարառեցիկական կարևորությունը:

Իրաքում քրդական գործոնի ուժեղացումը Թուրքիայի, ինչպես նաև ԻԻՀ-ի համար նշանակում է զգալի նահանջ Սերժավոր Արևելքում սեփական ռազմատարառեցիկական շահերի ոլորտում, քանի որ իրաքյան քրդերը չեն կարող լինել հուսալի գործընկերներ վերջիններիս համար: քրդերի համագործակցությունն ամերիկա-իսրայելական դաշինքի հետ բոլոր ժամանակներում առավել արդյունավետ է ստացվել (հարաբերական առումով): Եվ այժմ էլ քրդերը կանգնած են վերոհիշյալ դաշինքի կողքին: Բացի այդ, Թուրքիան և ԻԻՀ-ն Իրաքում խաղաղույթ են կատարում թուրքմենների և շիա մոաուվանների կրոնա-թնիկական փոքրամասնությունների վրա իսկ իսկ քրդական գործոնի ուժեղացումն Իրաքում կարող է թուլացնել հիշյալ երկրների ռազմավարական դիրքերը Սերժավոր Արևելքում:

Քրդական հարցի վերաբերյալ ԱՄՆ-ը պաշտոնապես թուրքամետ դիրքորոշում ունի: Այստեղ հայտարարել են Թուրքիայում քրդական պետության ստեղծման գաղափարի անհնարինություն մասին, որը պաշտպանվել է Իսրայելի կողմից: Բաց միևնույն ժամանակ նույն Միացյալ Նահանգների լուս համաձայնությամբ Իրաքի հյուսիսում այսօր փաստացի գոյություն ունի «քրդական պետություն», որին բարոյահոգեբանական և նյութական աջակցություն է ցուցաբերում Իսրայելը:

ԱՄՆ-ում քրդական հիմնախնդրով զբաղվում են երեք հետազոտական կենտրոններ՝ Միջին Արևելքի ինստիտուտը, Միջինարևելյան քաղաքականության վաշինգտոնյան ինստիտուտը, Միջազգային ռազմավարական հետազոտությունների կենտրոնը: Ամերիկյան քաղաքականության մեջ լուրջ դերակատարում ունի երկրորդը, որն աչքի է ընկնում իր իսրայելամետ դիրքորոշմամբ: Այստեղ չեն բացառում հյուսիսարևելյան Իրաքում անկախ քրդական պետության ստեղծման գաղափարը: Ինստիտուտի փորձագետները համակարծիք են Իսրայելի հետ,

այն հարցում, որ իրաքյան քրդերի իրավունքները պետք է տարածվեն նաև Քիրքուքի նավթաարդյունաբերական շրջանի նկատմամբ⁴⁴:

Հատկանշական է, որ վերջին գաղափարն ակնհայտորեն հակասում է թուրքական շահերին, որի դեմ առանձնահատուկ ոգևորությամբ է պայքարում Թուրքիան: Իրաքյան քրդերի դիրքերի ամրաստիչումն իրաքյան նավթի ապարեզում նշանակում է միևնույն ոլորտում թուրքական դիրքերի թուլացում:

Հրեական պետությունը շահագրգռված է տարածաշրջանային փոփոխությունների հարցում, որպեսզի այդպիսով կարողանա ապահովել իր ռազմատնտեսական շահերը տարածաշրջանում: Կարևորագույն քայլերից մեկն այս ուղղությամբ Իսրայելը համարում էր բաախստական վարչակարգի տապալումն Իրաքում: Խոսվում է այն մասին, թե 2003թ. ամերիկյան զորքերի՝ Իրաք ներխուժելու նախաբեկն Իսրայելն արդեն քննարկել է այն հարցը, թե ինչպես Իրաքի հաշվին կարգավորի իր տնտեսական խնդիրները⁴⁵:

Հասկանալի է, որ օվկիանոսի մյուս ափում գտնվող ԱՄՆ-ին դժվար կլիներ նման հեռավորությունից վերահսկել բոլոր գործողություններն Իրաքում: Նրան հարկավոր էին դաշնակիցներ, որոնց շարքում ԱՄՆ-ն առաջին հերթին համարեց Իսրայելին: Վերջինս, հանդիսանալով մերձավորաևելյան խնդիրների կարգավորման գործընթացներում ակտիվ մասնակցություն ցուցաբերող տարածաշրջանային երկիր, կարող էր զգալիորեն հեշտացնել Միացյալ Նահանգների գործը:

Իսրայելն ունի անհրաժեշտ տեխնոլոգիաներ՝ իրականացնելու բարդ գործողություններ: Սակայն չնոռանանք նաև քրդական գործոնը, որն Իսրայելը կարող էր օգտագործել իրաքյան ռազմական արշավի ընթացքում՝ ընդդեմ Ս. Հռետենի վարչակարգի:

Պատերազմի նախաբեկն որոշ իսրայելական լրատվամիջոցներ տեղեկություններ տարածեցին այն մասին, որ թուրքմեններն ու քրդերը տվել են իրենց համաձայնությունը համագործակցելու Իսրայելի հետ: Սակայն հարկ է նկատել, որ քրդերի պարագայում նման հայտարարությունը տրամաբանական է, բայց թուրքմենները, որոնց շահերը մեղմ ասած չեն համընկնում քրդական ազգային շահերին և որոնք հովանավորվում են Թուրքիայի կողմից, հազիվ թե միևնույն ճակատով հանդես գալու պատրաստակամություն հայտնեին՝ հօգուտ ամերիկյան ռազմաքաղաքական ճամբարի:

Թնիկ «Քրդստանում» ստեղծված քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները բազմաթիվ են: Նրանք առաջնորդվում են տարբեր գաղափարախոսություններով և ունեն միմյանցից տարբերվող, նույնիսկ իրարամերժ մտեցումներ քուրդ համրության խնդիրներին վերաբերող հարցերում: Եվ բնական է, որ նման պայմաններում չեն կարող նույնաման լինել մոտեցումները նաև արտաքին ուժերի նկատմամբ կողմնորոշվածության հարցում և առաջին հերթին այն ուժերի, որոնք անմիջական դերակատարում ունեն տարածաշրջանային գործընթացներում:

Ներկայացնելով իրենց ծրագրերը՝ քրդական կուսակցությունները հաճախ չեն նախանշում դրանց իրագործման ուղիները, որոնք պետք է դրվեն

⁴³ Տե՛ս Մուրադյան Ի., Թուրք-ամերիկյան հարաբերությունների տարածաշրջանային հիմնախնդիրները, «Արդարություն» մատենաշար - թիվ 2, Երևան, 2004, էջ 85

⁴⁴ Տե՛ս Մուրադյան Ի., նշվ. աղբ., էջ 76

⁴⁵ <http://www.evrey.com/sitep/analysis/print-arkh.php?menu=08-02/4>

տարածաշրջանային գործընթացների հիմքում: Սակայն Իսրայելի հարցում, ընդհանուր առմամբ, քրդական քաղաքական կուսակցությունները, կարևորելով քրդո-հրեական փոխառնչությունները, հաշվի են առնում այն հանգամանքը, որ Իսրայելը, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ ջանքեր է գործադրում քրդական գործունե մերձավորարևելյան գործընթացային օրակարգում պահելու ուղղությամբ: Բայց մյուս կողմից, քրդական հանրության առանձին շերտերում առկա հակաակամ մոտեցումներն Իսրայելի հետ փոխարաբերությունների գարգացման հարցում ամենևին չի խոսում քրդո-հրեական փոխշահավետ հարաբերությունների օգտին:

Վերոհիշյալ խնդիրը թերևս կարելի է դիտարկել «քրդական անմիասնականության բարդությո» շրջանակներում: Անմիասնականություն, որը սովորաբար գրկում է գործողությունները կոորդինացվածությունից և տանում դեպի փակուղի: Իսկ նման իրավիճակներում, որպես կանոն, ի հայտ է գալիս հարցերի լուծման ծայրահեղ տարբերակը՝ ահաբեկչության մեթոդը, որն արդի ժամանակաշրջանում դարձավ քրդերին ուղղված հիմնական մեղադրանքներից մեկը:

Վերջին տարիներին, կապված իրաքյան հայտնի իրադրությունների հետ, ակտիվացան քրդական իսլամական խմբավորումները, որոնք որդեգրել են ակնհայտ հակաիսրայելական քաղաքականություն: Ղրանց թվին է դասվում Քրդստանի իսլամական դաշինքը (ՔԻՂ), որն ստացավ հինգ պոռո իրաքյան խորհրդարանում և մեկ նախարարի պաշտոն: Այն հովանավորվում է արաբական արմատական խմբավորումների կողմից: 2005թ. հունվարի 30-ին՝ իրաքյան խորհրդարանի համաանական ընտրությունների ժամանակ, ՔԻՂ-ը մտավ Քրդստանի դաշինք կուսակցության կազմի մեջ սակայն նույն թվականի դեկտեմբերի 15-ին կայանալիք ընտրությունների նախաշեմին ՔԻՂ կուսակցությունը հայտարարեց իր՝ դաշինքից դուրս գալու մասին և առանձին մասնակցեց ընտրություններին: Այն լայնածավալ քննադատության ենթարկեց իրաքյան Քրդստանի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ մեղադրելով գործունեության անարդյունավետության, կաշառակերության, ազատությունների սահմանափակման մեջ Ղա որոշակի արձագանք գտավ բնակչության շրջանում: ՔԻՂ-ն օգտագործեց նաև ավանդական իսլամական հռետորությունը՝ անվանակոչելով իրաքյան Քրդստանի իշխանություններին «ԱՄՆ-ի և Իսրայելի գործակալներ»⁴⁶:

Մյուս քրդական խմբավորումը, որն սկզբունքորեն անընդունելի է համարում Իսրայելի հետ կապերի հաստատումը, Քրդական հեզբոլլան է (ԶՀ): Այս խմբավորման գործունեության մասին կարելի է պատկերացում կազմել Թուրքիայի ոստիկանության Հակասապեկչական վարչության հաղորդած տվյալներից⁴⁷: Ըստ այդմ՝ ԶՀ-ն իր արմատական գաղափարները գարգացրել է Եգիպտոսից, իսկ ավելի ուշ՝ ԻԻՀ-ից ներթափանցած հոսանքների ազդեցության ներքո: Բայց ժամանակագրական բնույթի հստակ տեղեկություններ չեն հաղորդվում:

⁴⁶ <http://news.iran.ru/news/40082/>, (H. Յ. Масаки, Курды в новом правительстве Ирака)

⁴⁷ See Yavuz M. Hakan, Islamic Political Identity in Turkey, New York, Oxford University Press, 2003, p. 176

Կազմակերպության պարագլուխները՝ Հոսեյն Վելիոդին և Ֆիդան Գյունգորը, իրենց ցանցերն են ստեղծել Թուրքիայի Դիյարբեքիր և Բաթման նահանգների շրջակայքում: Նրանք նախընտրեցին պայքարն սկսել «մտավոր ցիտադով»: Նպատակն էր՝ ստեղծել գրախառնությունների ցանց և չեչոը դնել հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացման վրա որից հետո ծավալել զինված պայքար:

Պարզ է, որ իսլամականների գործունեությունը սահմանափակված չէ կրոնական առաքելությամբ, և նրանց ցանկացած կոչ (դաքվա), չնայած իր արտաքին կրոնական կաղապարվածությանը, խորը քաղաքականացված է: Քրդական զանգվածներին իսլամականներն առաջարկում են պարզունակ գաղափարներ, որոնք շատ դեպքերում առանց խորը վերլուծության անմիջապես ընկալվում են քրդական որոշակի շերտերի կողմից. դրանք են՝ բոլոր իսլամադավան ժողովուրդները եղբայրներ են, նրանց միավորում է ումման (մուսուլմանական համայնք), բոլոր խնդիրները հնարավոր և անհրաժեշտ է լուծել շարիաթի դրույթներին համապատասխան և այլն: Չնայած այս ամենին՝ կան նաև դրական երևույթներ, որոնք հետագայում կարող են դառնալ քրդական կենդանի հանրությանը միավորող գործոններ:

Եթե մի քանի դարաշրջան առաջ քրդերին կարելի էր բնութագրել որպես «ներփակված» կնոս, ապա ներկայումս ի հայտ է եկել բազմամիլիոն քրդական սփյուռքը, որն իր քանակով (բայց ոչ կազմակերպվածությամբ) մրցակից է հրեական և հայկական սփյուռքի հետ: Քրդական սփյուռքը կարող է ժամանակի ընթացքում վերածվել քրդերի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքի ուղղորդման գործոն, եթե իհարկե բարձրանա նրա կազմակերպվածության մակարդակը:

Այստեղ առանձնահատուկ տեղ է հատկացվում Իսրայելի քրդական հրեաների համայնքին, որն իրադրությունների բերումով դարձել է քրդական սփյուռքի դերի և նշանակության բարձրացման հիմնական անկյունքաքարից մեկը: Քրդական հրեաների բեկանված շահերի պաշտպանությունն Իսրայել պետության համար այն գրավականն է հանդիսանում, որի միջոցով իսրայելական ղեկավարությունը ոչ միայն փորձում է վերահսկել քրդական սփյուռքի գործողությունները, այլև իր վճռական ծայրն ունենալ իրաքյան քրդերի ռազմա-ստորառեզիակն որոշումներում:

Ներկայումս քրդական հրեաների կենսամշակութային գործոնն Իսրայելի տարածաշրջանային ռազմավարության շրջանակներում կատարում է Իսրայելի կողմից քրդերի նկատմամբ իրականացվող ռազմավարության կողմնորոշիչ դեր: Քրդական հրեաների կենսամշակութային միավորը հրեաների և քրդերի փոխառնչություններից ձևավորված այն ընդհանուր պատմական հիմքն է, որն ամուր է պահում քրդո-հրեական կապի արդի ժամանակաշրջանում: Երկկողմ առնչությունների ներկա գարգացումների համատեքստում նվազ կարևորություն չեն ներկայացնում քրդական հիմնահարցի շարժառնակվող գործընթացները, որոնք իրենց անմիջական հետքն են թողնում քրդո-հրեական հարաբերություններում:

Թեև տրանսնացիոնալիզմը մի կողմից պատակտում է ազգայնական գաղափարախոսությունը, բայց մյուս կողմից խրախուսում է ազգի, տվյալ դեպքում՝ քրդերի համայնքում որպես կենսա-ազգային խմբավորում: Այն ունի իր

դրական և բացասական կողմերը. օրինակ՝ քրդական սվյուռքի ի հայտ գալը տարբեր երկրների քաղաքական համակարգերում մի կողմից ընդարձակում է քրդական ազգայնականության շրջանակները, մյուս կողմից բազմազանություն է մտցնում ազգայնականության գաղափարական ընկալումներում:

Տրանսպարենտ պիզնի հնարավորություններն անհանջափ են, ուստի որոշ քրդական խմբավորումներ ձեռք են բերում միջազգային քաղաքական և մարդասիրական աջակցություն, այն դեպքում, երբ մյուսները միջազգային ասպարեզում մնում են մեկուսացված:

Բայցևայնպես, տրանսպարենտ պիզնի կարող է լավագույնս օգտակար լինել քրդոգ ժողովրդի շահերին, եթե իր ողջ բազմազանությամբ և անհամաչափությամբ հանդերձ ծառայի հետակ և ընդհանուր նպատակի: Ի վերջո, տրանսպարենտ պիզնի հաղթանակն ապացուցված է պատմությամբ, երբ աշխարհով մեկ սփռված հրեա ժողովուրդն, առաջնորդվելով իր սեփական ակտիվությունն ունենալու վճռականությամբ, XXդ. կեսերին իրականություն դարձրեց անհրաժեշտ թվացող երազանքը:

Եթե նույնը նաև հաջողվի իրականացնել իրաքյան քրդերին, ապա դա ոչ միայն պատճառ կհանդիսանա մերձավորարևելյան գործընթացներում ներգրավված ուժերի վերադասավորության, այլև նոր էջ կբացվի քրդո-հրեական փոխառնություններում՝ տեղափոխելով դրանք համագործակցության և միջափոխական փոխարարությունների առավել բարձր մակարդակ:

Վերջաբանում ամփոփելով ուսումնասիրությունը քրդո-հրեական փոխառնությունների վերաբերյալ 1948-2006թթ.՝ առենափսյու կատարել է հետևյալ եզրակացությունները.

Քրդո-հրեական պատմական փոխառնությունների նախապատմությունը վերաբերում է մ.թ. մոտ X-XIդդ., այսինքն՝ այն ժամանակաշրջանին, երբ հրեական տարրը դրանից տասնյակ դարեր առաջ արդեն ներթափանցել և բնակություն էր հաստատել հետազգայում քրդաբնակ մերձավորարևելյան շրջաններում (մ.թ.ա VIIIդ.): Այդ տարածքները որոշակիորեն համընկնում են ներկայիս Իրաքյան Քրդստանի սահմաններին:

Քրդական հրեաների կենտրոնականությունն միավորի ծագումնաբանության ժամանակագրությունը վերաբերում է Xդ. հետո ընկած ժամանակաշրջանին, երբ պատմագրության մեջ հայտնվում են առաջին արժանահավատ տեղեկությունները քրդական կենտրոն վերաբերյալ:

Քրդական հրեաներն ունեցել են կարևոր դերակատարում ոչ միայն քրդո և հրեա ժողովուրդների պատմա-մշակութային, այլև քաղաքական փոխառնությունների համատեքստում:

XIXդ. երկրորդ կեսից քրդո-հրեական քաղաքական մակարդակի փոխառնությունները մոտաքան գործել պատմական զարգացում նոր փուլ: Դա հիմնականում պայմանավորվել է սիոնիստական գաղափարախոսության՝ աշխարհաքաղաքական ակտիվությամբ և XXդ. կեսերից՝ Խորպել ակտիվության կողմից քրդո-հրեական հարաբերությունների որոշակի ուղղորդմամբ:

XXդ. երկրորդ կեսից քրդո-հրեական փոխառնությունների հիմքում ընկած է ռազմա-քաղաքական ոլորտում գաղտնի համագործակցությունը:

Քրդո-հրեական ռազմա-քաղաքական փոխառնությունների ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այդ

փոխառնություններին խոչընդոտող գործոններին: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Մերձավոր Արևելքի քրդաբնակ տարածքներում գործող տարաբնույթ կրոնա-քաղաքական հոսանքներին, որոնք հաճախ ունեն իրարանցի դիրքորոշում հրեաների և Խորպելի հետ փոխարարությունների զարգացման հարցում:

Քրդո-հրեական ռազմա-քաղաքական մակարդակի փոխառնությունների դիտարկումն անհրաժեշտ է կատարել՝ հիմք ընդունելով քրդական կենտրոն պատմական հատվածների աշխարհաքաղաքական առանձնահատկությունները:

Արդի ժամանակաշրջանում քրդո-հրեական ռազմա-քաղաքական մակարդակի փոխառնությունների ուսումնասիրությունն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանային ընդհանուր զարգացումների համատեքստում՝ աներիկյան ռազմա-քաղաքական ճամբարի կողմից ծավալած հակաահաբեկչական քարոզարշավի շրջանակներում, որում անժխտելի է քրդական հիմնահարցի կարևորումը՝ որպես քրդերի հետ առավել բարձր մակարդակի ռազմա-ստրատեգիական համագործակցության և Մեծ Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման անհրաժեշտ նախապայման:

ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

- Քրդո հրեաների պատմական ուղին, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 1(21), Հայ-ռուսական միջազգային համալսարան, 2009, էջեր 59-62
- Խորպելա-քրդական հարաբերությունները 1948-1990թթ., «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2(39), Երևան, «Ատոլիկ» հրատարակչություն, 2009, էջեր 222-228
- Մերձավորարևելյան զարգացումներն արդի ժամանակաշրջանում և Խորպելը, «Իրան-նամե», արևելագիտական հանդես, հատոր 41, Երևան, Իրանագիտության կովկասյան կենտրոն, 2009, էջեր 1-5

Яралян Рудик Феликсович

КУРДО-ЕВРЕЙСКИЕ ВЗАИМООТНОШЕНИЯ В 1948-2006гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всеобщая история”

Защита состоится 19 июня 2009г. 13.00, по адресу: 375019, г. Ереван, пр. М. Баграмяна 24г, Институт Востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Исследование выполнено на основе преимущественно малочисленных печатных источников, разноязычной научной литературы, газет и журналов. Впервые делается попытка обоснованно изложить факты о скрытых взаимоотношениях курдов и евреев на протяжении 1948-2006гг.

Диссертация состоит из предисловия, трех глав, заключения и списка источников использованной литературы.

В предисловии обосновывается актуальность выбора темы, ее цель и задачи, научная новизна, практическое значение, излагается степень изученности темы.

В первой главе – “Формирование курдо-еврейских взаимоотношений”- освещаются и исследуются исторические корни курдо-еврейских взаимоотношений, основы и причины возникновения этно-культурной единицы курдских евреев.

Во второй главе – “Курдо-еврейские отношения в 1940-1980гг.”- представляется процесс развития скрытых военно-политических курдо-еврейских взаимоотношений во второй половине XX-го века. Изучаются также вопросы политического объединения курдских евреев на территории сионистского Израиля, исследуется проблема геополитического значения курдского вопроса в региональных политических развитиях.

В третьей главе – “Курдо-еврейские взаимоотношения на современном этапе” – изучаются изменения геополитических задач курдо-еврейских взаимоотношений начиная с 1990-х гг. Особо подчеркивается актуальность курдского вопроса как в двусторонних отношениях, так и в проблемах Ближневосточного урегулирования.

В заключении подводятся итоги исследования. В частности, обобщая, диссертант делает вывод, что культурно-исторические взаимоотношения курдов и евреев развивались совместно с политико-историческими двусторонними отношениями, которые начали выявляться на практике после возникновения сионистской идеологии и государства Израиль.

Rudik Yaralyan
Kurdo-Jewish associations in 1948-2006

